

առողջապահության նախարարը

08.02.2016



Օրերս Վայոց ձորի մարզի Շատին համայնքում տեղի ունեցավ <<Հոփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի բացման արարողությունը: Նորակառույց ամբուլատորիայի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը և ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը: Բացման արարողությանը ներկա էին նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Մամվել Թարվերդյանը, Մելս Հարությունյանը և ՀՀ առողջապահության նախարարության <<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի (ՀՀ ԱՆ ԱԾԻԳ) տնօրեն Նելսոն Զուլոյանը:

Նախարարը և մարզպետը շրջեցին նորակառույց ամբուլատորիայում, ծանոթացան աշխատանքային պայմաններին և գրուցեցին բուժանձնակազմի հետ:

Մարզպետ Հարություն Սարգսյանը նշեց, որ կառուցված ամբուլատորիան էականորեն կնպաստի բժշկական օգնության և սպասարկման գործընթացի բարելավմանը՝ նշելով, որ մարզի առողջապահական համակարգի զարգացման հարցը գնտվում է ՀՀ Նախագահի ուշադրության կենտրոնում:

Իր խոսքում նախարար Արմեն Մուրադյանը կարևորեց այն փաստը, որ ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում բնակչության առողջությունը պահպանելու և մարզերում համաչափ զարգացման ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, ինչ շնորհիվ հնարավոր կլինի առողջապահական խնդիրներին ժամանակակից ձևով լուծում տալ:

Տեղեկացնենք, որ ամբուլատորիան կառուցվել է ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակում: Համայնքի առողջապահական ամբուլատորիայի նախկին շենքը կառուցվել է 1958 թվականին: Հաշվի առնելով այն փաստը, որ շենքը սեյսմակայուն չի եղել և վերանորոգման աշխատանքներ կատարելը նույնպես, որոշում է կայացվել կառուցել ամբուլատորիայի նոր շենք, որի շինարարական աշխատանքները սկսվել էին 2015 թվականի հուլիսի 13-ին:

Հավելենք, որ գյուղական ամբուլատորիան սպասարկում է Եղեգնաձորի տարածաշրջանի 12 համայնքների 6109 բնակիչներին: